

**ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**  
**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 17/6**  
**20 մարտի 2018թ.**

Քննարկվեց Ա/Ձ Ալեքսան Կեսոյանի միջնորդությունը հնարավորություն ընձեռելու 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

**Ա/Ձ Ալեքսան Կեսոյանի բերված փաստարկները.**

Ա/Ձ Ալեքսան Կեսոյանը հայտնում է, որ 2018թ. հունվարի 13-ին իր անունով ներկայացվել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարարություն: Այնուհետև, երբ 2018թ. փետրվարի 21-ին ներկայացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 6 բաժին տարեկան հաշվետվությունը ներկայացնելու համար, նշված բաժնի աշխատակիցը տեղեկացրել է, որ իր հայտարարարությունը տպագրված է, սակայն ուղարկված չէ, հետևապես՝ այն համարվում է փաստացի չներկայացված:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Ալեքսան Կեսոյանը խնդրում է հնարավորություն ընձեռել 2018թ. ընթացքում համարվել շրջանառության հարկ վճարող:

**ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնա-  
ժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնա-  
ժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Ալեքսան Կեսոյանը զբաղվում է մանրածախ առևտրով և 2017թ. ընթացքում հանդիսացել է շրջանառության հարկ վճարող:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ 2018թ. հունվարի 13-ին Ա/Ձ Ալեքսան Կեսոյանը ստեղծել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարարությունը, սակայն իրեն փաստացի չի հաջողվել այն ուղարկել: Ընդ որում, շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարարությունը սահմանված ժամկետում ներկայացված չլինելու մասին Ա/Ձ Ալեքսան Կեսոյանը տեղեկացել է միայն 2018թ. փետրվարի 21-ին, երբ այցելել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 6 բաժին՝ տարեկան հաշվետվությունը ներկայացնելու համար: 2018թ. հունվարի 13-ին Ա/Ձ Ալեքսան Կեսոյանի կողմից շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարարությունը ստեղծվելու, սակայն այն փաստացի չուղարկվելու փաստը հաստատեց նաև նիստին ներկա գտնվող ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության աշխատակիցը: Արդյունքում, Ա/Ձ Ալեքսան Կեսոյանը զրկվել է 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու հնարավորությունից:

**Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.**

ՀՀ Հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգրք) 254-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված

պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շրջանառության հարկ վճարող կարող են համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը, որոնց նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 58.35 միլիոն դրամը:

Մինչույն ժամանակ, Օրենսգրքի 455-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 59-րդ և 254-րդ հոդվածներով սահմանված՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը, ինչպես նաև Օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված՝ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը գործում է 2019 թվականի հունվարի 1-ից, իսկ 2018 թվականի ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության ԱԱՀ-ի շեմը սահմանվում է 115 միլիոն դրամ:

Իր հերթին, Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված են այն վավերապայմանները, որոնց առկայության պայմաններում տնտեսվարող սուբյեկտը չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող:

Քննարկվող դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն Ա/Ձ Ալեքսան Կեսոյանը բավարարում է Օրենսգրքով նախատեսված բոլոր պահանջներին 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել Ա/Ձ Ալեքսան Կեսոյանին ներկայացնել հայտարարություն՝ 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 443-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ա/Ձ Ալեքսան Կեսոյանի կողմից սահմանված կարգով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու դեպքում 2018թ. ընկերությանը համարել շրջանառության հարկ վճարող:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ